

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԶՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ
P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, Է. Տարի, Թիւ 307, Ուրբաթ, 30 Հոկտեմբեր, 2015

ՀԱՅԿԱԿԱՆ

Հայաստանի Բանակի Ընդհանուր Հրամանատարը Մասնակցած Է Եւրոպական Բանակներու Հրամանատարներու Համաժողովին

Հայաստանի Հանրապետութեան բանակի ընդհանուր հրամանատար, զօրավար-գնդապետ Եւրի Խաչատուրովի գլխաւորած պատուիրակութիւնը 27-28 Հոկտեմբերին Գերմանիոյ Վիսպարթեն քաղաքին մէջ մասնակցած է Եւրոպական բանակներու հրամանատարներու 23-րդ միջազգային համաժողովին:

«Եւրոպայի մէջ Միացեալ Նահանգներու ցամաքային զօրքերու հրամանատարութեան կեդրոնին մէջ հիւրընկալուած ժողովին նպատակն էր արդիական սպառնալիքներու եւ մարտահրաւերներու շուրջ կարծիքներու փոխանակումը եւ զանոնք դիմագրաւելու շուրջ փոխըմբռնման եւ համագործակցութեան ձեւերու քննութիւն՝ յանուն շրջանային խաղաղութեան եւ կայունութեան», յայտնած է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան վարչութիւնը:

Ճ. Ուորլիք. «Հայաստանի Եւ Ազրայէճանի Նախագահները Համաձայնած Են Հանդիպիլ»



ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ամերիկացի համանախագահ Ճէյմզ Ուորլիք Պաքուի մէջ յայտարարած է, որ Հայաստանի եւ Ազրայէճանի նախագահներ Սերժ Սարգսեանն ու Իլհամ Ալիեւը մինչեւ տարեվերջ հանդիպելու փափաք յայտնած են: Այս մասին կը հաղորդէ «հաքքին.ազ» կայքը:

Ուորլիք հաստատած է, որ Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծումը շատ մեծ արժէք ունի ամբողջ շրջանին համար: «Մենք խաղաղութեան պէտք է

հասնինք յառաջիկայ սերունդներուն համար: Խաղաղութիւնը օգուտ պիտի բերէ երկու ժողովուրդներուն ալ», նշած է ամերիկացի համանախագահը:

Ան նաեւ ըսած է, որ չի հասկնար Մինսքի խմբակի համանախագահներուն հասցեագրուած քննադատութեան իմաստը, մանաւանդ որ իրենք իրենց կարելիութեան սահմաններուն մէջ ամէն ինչ կ'ընեն տագնապին լուծում մը գտնելու առումով: «Կարեւորը պետութիւններու ղեկավարներուն քայլերն են, ոչ թէ մեր յայտարարութիւնները», շեշտած է Ուորլիք:

Դաւիթ Բաբայեան. «Ազրպէյճան Ապացուցեց, Որ Ո՛չ Ինքզինք, Ո՛չ Ալ Միջնորդ Պետութիւնները Կը Յարգ Է»

Լեռնային Ղարաբաղի նախագահի բանքեր Դաւիթ Բաբայեան խօսելով ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի նախագահներուն Լեռնային Ղարաբաղ տուած այցելութեան մասին՝ հաստատած է, որ ատիկա կարելոր եւ պահանջուած էր, քանի որ միտքեր փոխանակուած են առկայ վիճակին, ինչպէս նաեւ՝ տագնապի լուծման մասին:

«Ստեղծուած է իւրայատուկ վիճակ, երբ կարգաւորման մասին խօսիլը, վերջնական լուծման հարցը դարձած են հեռաւոր խնդիրներ: Հանդիպումին ընթացքին հիմնական շեշտը դրուած է ներկայ կացութեան վրայ, խօսուած է սահմաններուն վրայ իրավիճակի թուլացման մասին: Արցախեան կողմը կրկին առաջարկած է զօրացնել դիտորդական խումբը, աւելցնել ներկայացուցիչներու ու թեքնիք կազմածներու թիւը, որպէսզի կարելի ըլլայ ամբողջական կերպով հետեւիլ զինադադարի խախտումներուն, եւ որպէսզի յայտարարութիւնները հասցեագրուած ու դիպուկ ըլլան: Մեղաւոր կողմը պէտք է պատասխանատու ըլլայ իր քայլերուն», յայտնած է Բաբայեան:

Անդրադառնալով դիտարկման ընթացքին հակառակորդին կողմէ արձակուած կրակոցին՝ Բաբայեան նշած է, որ ատիկա ոչ միայն անարգանք է միջնորդ պետութիւններուն նկատմամբ, այլ այդպիսով Ազրպէյճան ապացուցեց, որ ինքզինք եւ իր ժողովուրդը չի յարգեր:

«Կրակոցէն ետք սկսած են քարոզչութեան, որ իբր թէ ատիկա հայերուն կողմէ էր, մինչդէռ բոլոր փաստերը ապացուցեցին, որ իրենք են կրակողները: Մենք գործ ունինք նման անբնական պետութեան հետ, ուստի միջազգային հանրութիւնը պէտք է աւելի համարձակ քայլերու ձեռնարկէ», ըսած է Դաւիթ Բաբայեան՝ նշելով, որ ուշ կամ կանուխ պիտի գայ այն օրը, երբ միջազգային հանրութեան եւ միջնորդ պետութիւններուն դիրքորոշումը աւելի խիստ եւ հաստատ ըլլայ:

Ամերիկացի 85 քննկրեսականներուն կողմէ Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամային յղուած նամակին անդրադառնալով՝ Դ. Բաբայեան ըսած է, թէ ատիկա նաեւ պատգամ է ամերիկացի համանախագահ Ճէյմզ Ուորլիքի: «Այս քննկրեսականները լաւապէս կը պատկերացնեն, թէ ի՛նչ կրնայ ըլլալ, եթէ Ազրպէյճան նոյն ձեւով շարունակէ: Հետեւաբար, այս նախաձեռնութիւնը կարելի է միայն ողջունել, քանի որ ատիկա ո՛չ թէ հայամէտ, այլ ողջամիտ քայլ է, որ կը բխի իրենց պետութեան շահերէն: Յատկապէս այս կրակոցներէն ետք արձագանգը պէտք է ըլլայ աւելի մեծ ու բարձր», նշած է բանքերը:

Աղուան Վարդանեան. «Պէտք է Աշխատանք Տանիլ Համակարգին Նկատմամբ Քաղաքացիին Վստահութիւնը Շահելու»

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ, Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան քարտուղար Աղուան Վարդանեան 28 Հոկտեմբերին գումարուած Ազգային ժողովի նիստին անդրադարձած է «Հայաստանի Հանրապետութեան ընտրական օրէնսգիրքին մէջ» եւ

«Նոյնացման քարտերու մասին» Հայաստանի օրենքներուն մէջ փոփոխութիւն կատարելու մասին նախագիծի թղթածրարներուն: Ան շեշտած է, որ Հայաստանի մէջ առկայ է համակարգային հարց, որ կառավարութեան կը վերաբերի, որովհետեւ Հայաստանի մէջ քաղաքացիներուն մէկ մասը միայն նոյնացած քարտ ունի, այլ մաս մը թէ քարտ ունի, թէ սովորական անձնագիր, իսկ ուրիշներ ունին նաեւ կենսաչափական անձնագիր:

Ըստ Վարդանեանի, այս բոլորը խառնաշփոթ կը ստեղծեն, յատկապէս քաղաքացիներուն իրաւունքներն ու շահերը պաշտպանելու առումով: «Մենք ընդհանրական՝ պետական միասնական քաղաքականութիւն իրականացնելու, կառավարման խնդիր ունինք: Անկախ հանրաքուէէն, այս հարցին պէտք է վերջնական լուծումներ տրուին: Իրավիճակային լուծումները, կարկտաններով աշխատիլը ամէնէն վատ բանն է: Մեր բոլոր քաղաքացիները պէտք է ունենան անձը հաստատող միասնական փաստաթուղթ», դիտել տուած է ան՝ շեշտելով, որ այս հարցով պէտք է զբաղիլ իսկոյն, առանց յետաձգումներու:

Աղուան Վարդանեան իր խօսքին մէջ նշած է, որ պէտք է աշխատանք տանիլ ո՛չ միայն քաղաքացիին ընտրական իրաւունքները ճշդելու առումով, այլ համակարգին նկատմամբ անոր վստահութիւնը շահելու առաջադրանքով:

«Եւ պէտք չէ ընտրութիւններուն հանդէպ վստահելիութիւնը անընդհատ վերագրել քաղաքական ուժերուն՝ վերահսկեցէ՛ք, թոյլ մի՛ տաք, որ խախտումներ ըլլան: Համապետական ընտրութիւններուն համար պէտք է պատասխանատուութիւն կրէ պետութիւնը: Մենք այս մէկը պէտք է նկատի ունենանք նոր ընտրական օրէնսգիրքը մշակելու ստեն: Կը կարծեմ, թէ մեր առաջարկը այս պահուն կը լուծէ այս խնդիրը», հաստատած է ան:

Ըստ անոր, Դաշնակցութիւնը գրաւոր առաջարկ ներկայացուցած է, որ նոյնացման քարտ ունեցողներուն տրուի նաեւ համապատասխան տեղեկանք՝ քարտի թիւով, որ պիտի կնքուի եւ պիտի մնայ ընտրական տեղամասին մէջ: Մնացածը թեքնիք հարցեր են, որոնք պարտաւոր են լուծել պատկան մարմինները, շեշտած է Վարդանեան:

«Մենք պէտք է քայլերու ձեռնարկենք, որպէսզի մինչեւ յաջորդ համապետական ընտրութիւններ մեր բոլոր քաղաքացիները ունենան անձը հաստատող միասնական փաստաթուղթ: Ատիկա կրնայ ըլլալ նոյնացման քարտը: Վստահ եմ, որ գումար կը գտնուի այդ նպատակի համար: Ասիկա կարելիութիւն պիտի տայ անցնելու քուէարկութեան ժամանակակից ելեկտրոնային համակարգի, եւ վերջապէս բնական ընտրութիւններ կայացնելու: Երկրին բնականոն զարգացման միակ ուղին ա՛յս է», եզրափակած է Աղուան Վարդանեան:

Սպանիոյ Ալտայա Քաղաքը Պաշտօնապէս Ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը

«Արմէնփրես» կը հաղորդէ, որ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան մամլոյ, տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապի վարչութենէն յայտնած են, որ Սպանիոյ Վալենսիա մարզի Ալտայա քաղաքը 27 Հոկտեմբերին պաշտօնապէս ճանչցած է Հայոց ցեղասպանութիւնը՝ միանալով տասնեակ սպանական քաղաքներու, որոնք պաշտօնապէս ճանչցած ու դատապարտած են ցեղասպանութիւնը:

Վալենսիոյ «Արարատ» հայկական միութեան ներկայացուցած բանաձեւը Քաղաքային խորհուրդի նիստի քննարկման դրուած է Ձախ միութեան բանբեր Խուանիսո Եորենթէի կողմէ:

Քաղաքային խորհուրդը ներկայացնող չորս կուսակցություններն ալ միաձայնությամբ թեր քուէարկած են Օսմանեան Թուրքիոյ կողմէ գործուած ոճրագործութիւնը՝ իբրեւ ցեղասպանութիւն բնորոշման եւ ժխտողականութեան դատապարտման:

Քաղաքային խորհուրդի նիստին ներկայ եղած են Վալենսիոյ հայ համայնքի ներկայացուցիչներ, սպանացի հասարակական-քաղաքական գործիչներ:

Ուքրանիոյ Տնփրոփէթրովսք Քաղաքը Ճանչցած Է Հայոց Ցեղասպանութիւնը

«Արմէնփրես» կը հաղորդէ, որ ազրպէյճանական լրատուամիջոցներուն տարածած այն լուրը, որուն համաձայն, Ուքրանիոյ Տնփրոփէթրովսքի քաղաքապետը մերժած է Հայոց ցեղասպանութեան ճանաչման օրինագիծը, իրականութեան չի համապատասխաներ:

Տնփրոփէթրովսքի քաղաքային խորհուրդի անդամ, հայ համայնքի ներկայացուցիչ Էդիկ Բաղդասարեան «Արմէնփրես»-ի յայտնած է, որ քաղաքապետը մէկ շաբաթ առաջ ստորագրած է որոշումը, որ ապա տեղադրուած է քաղաքապետարանի կայքին վրայ:

Բաղդասարեան նոյնիսկ որոշումին օրինակը պատճենահանած է, որպէսզի ուղարկէ լրատուամիջոցներուն՝ հերքելու համար ազրպէյճանական լրատուամիջոցներուն կեղծիքը:

«Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը Տնփրոփէթրովսքի քաղաքային խորհուրդը քննարկման դրած է այս տարուան սեպտեմբերին: Այդ ժամանակ թուրքերն ու ազրպէյճանցիները մեծ աղմուկ բարձրացուցին: Նոյնիսկ Ուքրանիոյ մէջ Թուրքիոյ հիւպատոսը եկած էր քաղաքապետարան՝ պահանջելով, որ օրինագիծը չորդեգրուի: Անոնք այս մէկ ամսուան ընթացքին անընդհատ խումբերով կու գան քաղաքապետարան եւ ամէն ջանք կը գործադրեն, որպէսզի օրինագիծը չորդեգրուի: Սակայն 24 Հոկտեմբերին, Տնփրոփէթրովսքի քաղաքապետը ստորագրած է քաղաքային խորհուրդի ներկայացուցած օրինագիծը, եւ ատիկա մտած է ուժի մէջ», հաստատած է Բաղդասարեան:

Անտրէաս Պեշքէ. «Հայոց Ցեղասպանութեան Հարցին Մէջ Գերմանիան Պետք Է Պատմական Պատասխանատուութիւն Ստանձնէ»

Գերմանիոյ արտաքին գործոց դաշնակցային նախարարութեան Արեւելեան Եւրոպայի, Հարաւային Կովկասի եւ Կեդրոնական Ասիոյ շրջանի երկիրներու հարցերով յատուկ յանձնակատար Անտրէաս Պեշքէ Ծիծեռնակաբերդ կատարած իր այցելութեան ընթացքին յայտարարած է, որ Գերմանիոյ խորհրդարանը անկախ կառոյց է եւ դժուար է ըսել, թէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցին առնչութեամբ ի՞նչ որոշում կարելի է կանխատեսել:

Ծիծեռնակաբերդ այցելութենէն ետք լրագրողներուն հետ ունեցած գրոյցին ընթացքին Անտրէաս Պեշքէ ըսաւ. «Չեմ գիտեր, թէ ի՞նչ որոշում կարելի է կայացնել, քանի որ խորհրդարանը անկախ մարմին է, եւ իւրաքանչիւր անձ ունի ազատ կամքի արտայայտման իրաւունք: Սակայն կը կարծեմ, թէ պատմական պատասխանատուութիւն պէտք է ստանձնէ Գերմանիան եւ այդ առնչութեամբ քայլեր կատարէ», դիտել տուած է Պեշքէ: Անոր համաձայն, այս տարուան

ընթացքին նմանատիպ քայլեր արդեն առնուած են, օրինակ՝ Պերլինի մայր տաճարին մէջ տեղի ունեցած պատարագն ու նախագահին ելոյթը:

Պատասխանելով այն հարցումին, թէ խորհրդարանի որոշումին վրայ ինչպիսի՞ ազդեցութիւն պիտի ունենայ Գերմանիոյ վարչապետ Անկէլա Մերքելի Թուրքիոյ մէջ կատարած յայտարարութիւնը՝ Պեշքէն ըսած է, որ անոնք երկու տարբեր հարցեր են, եւ մէկը միւսին հետ կապ չունի: Անդրադառնալով այն դիտարկումին, որ Մերքել Թուրքիոյ մէջ ըսած է, որ ներկայ դրութեամբ Հայոց ցեղասպանութեան քննարկման հարցը օրակարգային չէ, քանի որ ներկայ դրութեամբ Գերմանիոյ գլխաւոր խնդիրը գաղթականներն են, յատուկ յանձնակատարը ըսած է. «Ես կ'ըսեմ, որ պատմական պատասխանատուութիւնը շատ կարեւոր է գերմանացիներուն համար, քանի որ մենք շատ զգացական կերպով կը մօտենանք այդ հարցին: Մենք ունեցած ենք տարբեր քննարկումներ Ռոջակիզումին կապուած: Ասիկա այլ հարց է, իսկ գաղթականներուն, փախստականներուն խնդիրը, այլ հարց է: Ներկայ դրութեամբ անիկա նոյնպէս շատ կարեւոր է, քանի որ օրական 10,000 փախստական կը մտնէ», յայտնած է Պեշքէն:

Նշենք, որ Անտրէաս Պեշքէ Հայաստան եկած է շրջանային այցելութեամբ: Անկէ առաջ ան այցելած է Պաքու եւ Թիֆլիս: Երեւանի մէջ ան հանդիպումներ պիտի ունենայ Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգէն Սարգսեանի եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարի տեղակալ Կարէն Նազարեանի հետ:

Ըստ Համաշխարհային Դրամատան Տարեկան Զեկուցումին. Գործառնութիւն Սկսելու Առումով Հայաստանի Հանրապետութիւնը՝ Աշխարհի Լաւագոյն Երկիրներու Շարքին Է

Հրապարակուած է Համաշխարհային դրամատան «Տուինկ պիզնըս 2016», «Կանոնակարգիչ դաշտի որակի եւ նպատակային արդիւնաւէտութեան գնահատում զեկուցում»-ը, որուն համաձայն, Հայաստանի Հանրապետութեան գտնուած տարածաշրջանին մէջ 25 երկիրներէն 23-ի մէջ արձանագրուած է 58 բարեփոխում:

Համաշխարհային դրամատան Երեւանի գրասենեակէն այս կապակցութեամբ յայտնած են, որ, նախորդ տարուան զեկուցումի արդիւնքներուն հետ բաղդատելով, Հայաստան այս տարի իր ամենէն բարձր ցուցանիշէն 2 կէտով յառաջացած է:

Համաշխարհային դրամատան գրասենեակի հաղորդագրութեան մէջ կ'ըսուի. «Հայաստանը դիրացուցած է շինարարական արտօնութիւններուն կապուած հոլովոյթը: Մասնաւորաբար, ցած ռիսքային նախագիծերու համար չեն կիրարկուիր անկախ փորձագետի կողմէ ճարտարապետական նախագիծի հաստատման եւ շինարարութեան նկատմամբ թեքնիք վերահսկողութեան պահանջները:

«Բացի ատկէ, Եւրասիական տնտեսական միութեան անդամակցելու կողքին երկիրը կրճատած է Ռուսիոյ հետ առեւտուրի առնչուած փաստաթղթային ու սահմանային ընթացակարգերու ժամանակն ու ծախսերը:

«Եւ, ի հարկէ պէտք է նշել, թէ, նոր օրէնքին համաձայն, որով գործով դատաւորներու նշանակումը կը կատարուի պատահականութեան սկզբունքով ու ամբողջովին ինքնաշխատ

համակարգի միջոցով, դիրացուած է պայմանագիրներու կիրարկման հարցը երկիրի բոլոր դատարաններուն մէջ:

«Հայաստանը աշխարհի 26 այլ տնտեսութիւններու շարքին այն երկիրներէն է, որ գործադրած է երեք կամ աւելի բարեփոխումներ, այդպէս վարուած են աշխարհի տնտեսութիւններու միայն 14 առ հարիւրը:

«Նախորդ տարուան զեկուցումի արդիւնքներուն համեմատ, Հայաստան այս տարի 2 կէտով մօտեցած է բարձրագոյն ցուցանիշին:

«(...) Մասնաւորաբար բարելաւումներ արձանագրուած են հետեւեալ ուղղութիւններով՝

– Բարեփոխումներ սահմանային առեստորի ուղղութեամբ. Եւրասիական տնտեսական միութեան անդամակցելու իբրեւ արդիւնք Հայաստան կրճատած է Ռուսիոյ հետ առեստորի փաստաթղթային ու սահմանային ընթացակարգերու ժամանակն ու ծախսերը: Իբրեւ արդիւնք ներածման համար պահանջուող ժամանակը 50 ժամէն նուազած է՝ մօտաւորապէս կազմելով 3 ժամ: Այս ցուցանիշով երկիրը 58-րդ դիրքէն փոխադրուած է 29-րդ դիրք:

– Բարեփոխումներ պայմանագրերու կիրարկման ուղղութեամբ. նոր օրէնքի համաձայն, որով գործող դատաւորներու նշանակումը կը կատարուի պատահականութեան սկզբունքով ու ամբողջովին ինքնաշխատ համակարգի միջոցով, Հայաստանի բոլոր դատարաններուն մէջ դիրացած է պայմանագիրներու կիրարկման հարցը:

– Գործառնութիւն սկսելու առումով Հայաստանը աշխարհի վրայ լաւագոյն երկիրներու շարքին է (189 տնտեսութիւններու շարքին կը գրաւէ 5-րդ հորիզոնականը), իսկ սեփականութեան արձանագրման տեսանկիւնէն կը գտնուի 14-րդ դիրքի վրայ:

«Երեւանի մէջ գործառնութիւն սկսելու համար գործարարէն կը պահանջուի 3 օր: Ասիկա Դանիոյ ցուցանիշին հետ համադրելի արդիւնք է:

«Ի տարբերութիւն աշխարհի վրայ իբրեւ միջին նկատուող սեփականութեան արձանագրութեան համար պահանջուող 48 օրուան, Հայաստանի մէջ այդ ցուցանիշը կը կազմէ 7 օր»:

Ի տարբերութիւն Հայաստանի Հանրապետութեան, Ազրպէյճան 189 երկիրներու շարքին գրաւած է 63-րդ դիրքը եւ կը գտնուի Ռուանտայի եւ Ժամայքայի միջեւ: Անցեալ տարի ան 80-րդ դիրքի վրայ էր: Այս տարուան համաշխարհային վարկանիշին մէջ Հայաստանն ու Վրաստանը դարձեալ յառաջ անցած են Ազրպէյճանէն:

Վարկանիշը 10 տարիէ ի վեր անընդմէջ կը գլխաւորէ Մինկափօրը: Վարկանիշի յառաջատարներու տասնեակին մէջ են նաեւ Նոր Զելանտան, Դանիան, Հարաւային Քորէան, Հոնկ Բոնկը, Բրիտանիան, Միացեալ Նահանգները, Շուէտը, Նորվեկիան եւ Ֆինլանտան:

Նախկին Խորհրդային Միութեան տարածքին մէջ գործառնութեան յարմարաւէտութեան վարկանիշին մէջ յառաջատարը Էսթոնիան է: Անոր կը հետեւին Լիթուանիան (22), Վրաստանը (24), Հայաստանը (35), Պիլեյթուսիան (44), Ռուսիան (51), Մոլտովան (52), Խըրվըզիստանը (67), Ուքրանիան (83), Ուզպեքիստանը (87) եւ Տաճիկիստանը (132):

Նշենք, որ, ըստ Համաշխարհային դրամատան զեկուցումին, Լիբանան կը գրաւէ 123-րդ դիրքը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

**Վիեննայի Մէջ Սուրիոյ Վերաբերող Բանակցութիւններ՝
Իրանի Մասնակցութեամբ**



Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա յայտարարեց, որ ուրբաթ օր Աւստրիոյ մայրաքաղաք Վիեննայի մէջ տեղի պիտի ունենայ Ռուսիոյ, Միացեալ Նահանգներու, Մէուտական Արաբիոյ եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներու մակարդակով ժողով մը, որուն հրաւիրուած են նաեւ Իրանը, Եգիպտոսը, Իրաքը եւ Լիբանանը:

Ան աւելցուց, որ նշեալ պետութիւնները Վիեննայի ժողովին հրաւիրելու գաղափարը կը պատկանի Ռուսիոյ, իսկ հրաւերներու փոխանցումը կատարուած է Միացեալ Նահանգներու կողմէ:

Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեց, որ արտաքին գործոց նախարար Մոհամետ ժաւատ Զարիֆ պիտի մասնակցի Վիեննայի ժողովին:

Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարգիէ Աֆղամ յայտնեց. «Մենք սերտեցինք հրաւերը, եւ որոշուեցաւ, որ արտաքին գործոց նախարարը մասնակցի բանակցութիւններուն»:

Եգիպտոս եւ Իրաք եւս հաստատեցին, որ ընդունած են հրաւերը:

«Ֆարս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Զարիֆ երեքշաբթի օր հեռաձայնային զրոյցի մը ընթացքին Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի հետ քննարկած է Վիեննայի ժողովին մասնակցութեան հարցը:

Քրեմլինի բանբեր Տմիթրի Փեսքով հետազային լրագրողներու յայտնեց, որ Ռուսիա կ'ուզէ Սուրիոյ վերաբերող «երկխօսութիւնը ընդլայնել»:

Նշենք, որ Ֆրանսա եւս յայտարարեց, որ պիտի մասնակցի Վիեննայի ժողովին: Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Լորան Ֆապիւս ըսաւ, որ Փարիզ եւ անոր արաբ դաշնակիցները կ'ուզեն Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի իշխանութենէն հեռացման յստակ ժամանակացոյց մը քննարկել:

Միւս կողմէ, Թուրքիոյ վարչապետ Ահմէթ Տաւրթօղլու յայտնեց, որ իր երկիրը կը շարունակէ աջակցիլ Սուրիական ազատ բանակին եւ զայն կը նկատէ սուրիացի ժողովուրդին միակ ներկայացուցիչը:

Մինչ այդ, Միացեալ Նահանգներու բանակի հրամանատարներու միացեալ յանձնախումբի նախագահ զօր. ժոզէֆ Տանֆորտ Օերակոյտին մէջ իր արտասանած խօսքին մէջ յայտնեց, որ Ուաշինկթըն ռազմական տեսանկիւնէն կրնայ Սուրիոյ մէջ թռիչքներու արգիլեալ գօտի ստեղծել՝ աւելցնելով, որ խնդիրները քաղաքական եւ իրաւական բնոյթի են:

Իրաք Դատ Կը Բանայ Թուրքիոյ Դէմ Հիւսիսային Իրաքի Քարիւղը Իսրայէլ Արտածելուն Համար



Փարիզի միջազգային իրաւարար դատարանին մէջ Իրաք դատ բացաւ Թուրքիոյ դէմ՝ հիւսիսային Իրաքի քարիւղը Իսրայէլ արտածելուն համար եւ մէկ միլիառ տոլարի փոխհատուցում պահանջեց:

Հիւսիսային Իրաքէն քարիւղը Թուրքիոյ ճամբով միջազգային շուկայ արտածումը կը շարունակուի եւ, ըստ Թուրքիոյ ուժանիւթի նախարարութենէն աղբիւրի մը, նշեալ քարիւղը հիմնականին մէջ կ'երթայ Իսրայէլ:

Նշեալ անանուն աղբիւրը «Թուրքիա այսօր» կայքին յայտնած է, որ Իրաքի կեդրոնական կառավարութիւնը այս հարցով դիմած է Փարիզի մէջ Միջազգային իրաւարար դատարանին, որովհետեւ հիւսիսային Իրաքի քարիւղը ստոր վերապահուած Իրաք-Թուրքիա խողովակաշարի ճամբով փոխադրումը կը հակասէ երկու երկիրներուն միջեւ կնքուած համաձայնութեան:

Աղբիւրը աւելցուցած է, որ դատը կորսնցնելու պարագային Թուրքիան մէկ միլիառ տոլարի փոխհատուցում պիտի վճարէ: Ան նշած է, որ նշեալ քարիւղի արտածման շարունակութիւնը առաւել եւս բարդացուցած է հարցը:

Թրքական ՊՈԹԱՇ ընկերութիւնը 2014-էն մինչեւ յուլիս 2015 ճէյհանի խողովակաշարի ճամբով 81 միլիոն 785 հազար 960 տակառ քարիւղ փոխադրած է:

Էրտողան. «Թուրքիա Կ'ենթարկուի Պետութիւնը Տապալելու Այն Փորձերուն, Որոնց Կ'ենթարկուէր Օսմանեան Պետութիւնը»

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան հանրապետութեան տօնին առիթով իր արտասանած խօսքին մէջ ըսաւ. «Թուրքիան կը շարունակէ ենթարկուիլ պետութիւնը տապալելու փորձերուն, որոնցմէ իրմէ առաջ կը տառապէր օսմանեան պետութիւնը»՝ աւելցնելով. «Աշխարհի վրայ չկայ որեւէ այլ ազգ, որ մեր ազգին փառքին ու ժառանգութեան նմանը ունի»:

«Մենք սելճուքեան պետութեան զաւակներն ենք, այդ պատճառով ալ հանրապետութեան շէնքին արտաքինը կառուցուեցաւ սելճուքեան ոճով, իսկ ներքին մասը՝ օսմանեան ոճով», ըսաւ ան:

Էրտողան աւելցուց. «Յեղաշրջման բազմաթիւ փորձեր ապրեցանք, սակայն անցեալ տարի տեղի ունեցած վերջին յարձակումը շատ վայրագ էր»: «Անցնող 13 տարիներուն բաղդատմամբ հանրապետութեան պատմութեան 80 տարիներուն, յաջողեցանք շատ բան կատարել, ինչպէս նաեւ Թուրքիոյ հանրապետութեան առաջին հարիւրամեակին վերաբերեալ պատկերացման զարգացման գծով աշխատեցանք», ըսաւ Էրտողան:

ՏԵՍԱԿԷՏ

Ժխտողականության Քրեականացումը Առաջնային Խնդիր Չէ



Հայկական կողմը թե՛ պաշտօնական Երեւանի եւ թե՛ հասարակական կազմակերպություններու մակարդակներով վճիռի թղթածրարին մեջէն պիտի փորձէր վեր առնել դրական այն բաժինները, այստեղ եւս գլխաւոր դատախազի կողմէ որոշ չափազանցութեամբ յատարարելու համար, որ վճիռը կը բաւարարէ Հայաստանի հանրապետութեան

կառավարութեան բոլոր պահանջները:

Քաղաքականացուած այս արձագանգները երկկողմանիօրէն մտածել կու տան վճիռի այնքան նուրբ ու դիւանագիտական ձեւակերպումներուն մասին, որոնք զոհ ձգած են հակոտնեայ կողմերը: Երեւութեամբ տուժող չկայ, երկու կողմերը բաւարարուած են վճիռի եզրակացութիւններով:

Իրականութիւնը սակայն այդպէս չէ. փաստօրէն, «ՄԻԵԴ»-ը չի բաժնէր Յիւրիխի դիրքորոշումը այս հարցին մէջ ժխտողականութեան քրեականացում ամրագրելու տեսակէտէն: Խնդիրը իրաւական տեսակէտէն Յիւրիխ-«ՄԻԵԴ» յարաբերակցութեան վրայ է : Ըստ էութեան իսաղը աւարտած է 0-1 արդիւնքով, յօգուտ...Անգարայի: Վճիռին հիմնաւորումներուն եւ ձեւականօրէն իրաւական մեկնաբանութիւններուն մէջ յստակօրէն կ'ընդգծուի Հոլոքոսթի գերակայութեան խնդիրը նման քրեականացումներու պարագային, աւելի եւս շեշտելով հարցին քաղաքական բնոյթը:

Հայկական կողմը այս երեւոյթներուն ի տես վերատեսութեան ենթարկելու անհրաժեշտութեան առջեւ կը գտնուի՝ ժխտողականութեան քրեականացման պայքարի մարտավարութիւնները փոխելու կամ նոյնիսկ նման առաջադրանքի առաջնայնութիւնը հարցականի տակ առնելու առումով:

Միջավայրը՝ եւրոպական, շեշտակիօրէն զգայուն է մարդու արտայայտուելու իրաւունքներու անհպելիութեան տեսակէտէն: Կարծիքի ազատութիւնը, արտառոց վարկածներ առաջ քշելը, փերինչէքեան մարտահրաւերներ կարդալը ընկալելի են եւրոպական արժեհամակարգային դրոյթներուն համար եւ նման պայքար մը դժուար թէ առաւելներ կարենայ ձեռք ձգել յատկապէս կարծիք յայտնելու ազատութիւնը կաշկանդելու քարոզչական յայտարարութիւններուն դիմաց: Բնական է, ինչպէս վերը նշեցինք, այս բոլորը երկրորդ կարգ կ'անցնին երբ հարցը կը վերաբարի Շոալի

Ժխտումին: Կը թուի, որ ժխտողականութիւն քրեականցնելու հրեական մենաշնորհը տակաւին խախտելու նախադրեալները չեն հասունցած քաղաքական գետնի վրայ:

Հայկական կողմէն նման թիրախաւորում մը Եւրոպայի մէջ ,յատկապէս վերջին շրջանին՝ 100-ամեակի շրջածիրին մէջ յաղթական դիրքերէն զիջիլ կ'ենթադրէ: Ճանաչումն ու դատապարտումը առաւելներ ապահոված են հայկական կողմին: Ժխտումի քրեականցումը նոյն յաջողութեան ուղիէն կրնայ չառաջնորդել մեզ, քաղաքական եւ մենաշնորհային դրոյթներու ներկայ պայմաններով:

Հիմնաւորումները կը յուշեն, որ ժխտողականութեան քրեականացումը պայքարի ընթացքին գօտի է եւ ճանաչումէն հատուցում մեր համընդհանուր վարքագիծին առաւելներ չ'ապահովեր: Յեղասպանութեան ճանաչման համահայկական ռազմավարութիւնը հատուցման իրաւական թղթածրարի պատրաստութեան հսկայական աշխատանքներէն շեղումներ պէտք չէ արձանագրէ, որոնք կրնան բացասական առումով բեկում առաջացնել հայկական կողմին մէջ եւ պատճառ դառնալ, ձեռք ձգուած առաւելներուն դէմ հակաքայլերու ենթահող տրամադրելու Անգարային: Թրքական կողմը այս հանգամանքներէն եւ «ՄԻԵԴ»-ի քաջալերող այս վճիռէն մեկնած Եւրոպական միջավայրերու մէջ ժխտումի նոր նախաձեռնողականութիւններով կրնայ հանդէս գալ: Պատահական չէ, որ թրքական կիսապաշտօնական արձագանգներուն մէջ կը խօսուի հարիրամեայ ստաբանութեան վերջ դրուելուն մասին: Ակնարկը հարիրամեակի մեր իրագործումներուն դէմ կարելոր քայլ նկատել է Զուիցերիոյ քրեականացման որոշումի բեկանումը:

Որքան ալ ներերոպական խնդիր փորձենք նկատել «ՄԻԵԴ»- Յիւրիխ իրաւական հակամարտութիւնը, պատճառներ կան վերատեսութեան ենթարկելու ժխտումի քրեականացման մեր մարտավարութիւնը: Համաեւրոպական այլ հաստատութիւն մը՝ եւրոխրիդրանար ոչ հեռու անցեալին ամէնէն խիստ բանաձեւերը կ'որդեգրէր Ագրպէյճանի դէմ, եւ կոչ կ'ըներ հասցեական պատժամիջոցներու անցնելու: Մեր խնդիրներու անմիջականութիւնը նկատի ունենալով, գուցէ Եւրոխորհրդարանի որոշումը շատ աւելին է իբրեւ արժէք, քան «ՄԻԵԴ»-ինը: Երկուքն ալ աշխարհագրական եւ արժեհամակարգային միեւնոյն պայմաններուն մէջ:

Հարիրամեակին , ձեռք բերուած արդիւնքներու բարձրակէտէն վայրէջներ կատարելու հաւանականութիւնները նուազագոյնի պէտք է իջեցնել: Էներկիան եւ նիւթականը, գումարած կազմակերպականին եւ քարոզաքաղաքականին պէտք է կեդրոնացնել հատուցման առաջադրանքի իրաւականացման վրայ, ինչպէս նախանշած է Յեղասպանութեան 100-ամեակի Հռչակագիրը:

ՇԱՀԱՆ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ

Ժխտողական քրեականացման որոշումի բեկանման առիթով Շահան Գանտահարեանի յօդուածին կապակցութեամբ

Հայ Դատի միջազգային քարոզչական աշխատանքներուն մէջ, անկասկած կարելի էր յաւելեալ յաջողութիւն մը նկատել Տիրիխի Հայոց Ցեղասպանութեան գծով որդեգրած ժխտողականութեան քրեականացման որոշումը, որովհետեւ այս մէկը ճանաչումէն ու դատապարտումէն մէկ քայլ աւելի բարձր կեցուածք կարելի էր համարել տուեալ երկրին պարագային ի նպաստ Հայ Դատին:



Արդարեւ, Շուէցարիայի վերոյիշեալ որոշումը յստակօրէն քաղաքական դիրքորոշում մըն էր Թուրքիոյ հանդէպ, որը հաւանաբար կարող էր քաղաքական ծանր յանձնառութեան տակ ձգել Թուրքիան, եթէ աննշմար անցնէր: Նմանատիպ վերլուծումի կարելի է հասնիլ, նկատի առնելով, որ ժխտողականութեան քրեականացման առնչութեամբ Հայոց Ցեղասպանութեան գծով միայն մէկ նախադէպ գոյութիւն ունէր (Ֆրանսայի պետութեան կողմէ) եւ եզակի երեւոյթ մըն էր:

Սակայն այսօր, երբ Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակին առիթով Թուրքիան ենթարկուած է միջազգային քաղաքական ահաւոր ճնշումի ու շրջափակման , որոնց նկատմամբ ժխտումէն ու անճառակ յայտարարութիւններէն բացի, չունի ո՛չ մէկ համոզիչ ու տրամաբանական բացատրութիւն: Հետեւաբար Թուրքիան որոշ ուշացումով անդրադարձաւ, որ եւրոպական երկրորդ պետութեան մը ժխտողականութեան քրեականացման որոշումի որդեգրման եւ անոր անարձագանգ ձգուելու պարագային, մի քանի տասնեակ եւրոպական երկիրներ մեծ հաւանականութեամբ պիտի երթային քաղաքական նոյն ճամբով, որը իսկապէս Թուրքիան կը դնէր քաղաքական ու բարոյական ծանր եւ վտանգաւոր կացութեան մէջ:

Ահա թէ ինչո՞ւ Թուրքիան իր բոլոր կարելիութիւններով, հնարամտութիւններով, իրաւաբանական բազմաբնոյթ խորհրդածութիւններով հազիւ թէ յաջողեցաւ այդ վտանգէն խուսափիլ եւ ձեռով մը կանխարգիլեց եւ վիժեցուց՝ ի նպաստ Հայ Դատին արձանագրուող գեղեցիկ կէտ մը: Այս հարցի հոլովոյթին մէջ, ճիշդ չէ այն տեսակէտը, որ Թուրքիան 0-1 արդիւնքով յաղթական դուրս եկաւ մարդկային իրաւանց եւրոպական դատարանի որոշումով, քանի որ այդ որոշումը միայն բեկանեց ժխտողականութեան քրեականացման բանաձեւը, որ կը հակադրուի եւրոպական մարդկային իրաւանց եւ ազատութիւններու սկզբունքին:

Ես անձնապէս մտահոգ չեմ, որ այս հարուածէն խուսափելով, Թուրքիան բարոյական իրաւունքը ունենայ հերքելու Հայոց Ցեղասպանութեան վաւերականութիւնը եւ իր պատասխանատուութիւնը:

Այսօր տուեալ զարգացումներուն մէջ, մենք պէտք է Հայոց Ցեղասպանութեան ժխտողականութեան քրեականացման կարեւոր հանգամանքը պահենք մեր ուշադրութեան կեդրոնին մէջ, որովհետեւ աշխարհաքաղաքական տարբեր պայմաններու մէջ, ամենայն հաւանականութեամբ, եւրոպական երկիրները կը կարողանան աւելի հանգիստ հասնիլ նոյն բանաձեւի որդեգրման, ուր կարելի չէ զայն բեկանել:

Քուէթ, 30 Հոկտեմբեր 2015

Բժշկ. Ժան Պէպէճեան

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

**«Քոչարեանը Միալում է Եւ Ինքն Իրեն Հակասում»
«Առաջին Լրատուական»-ի Հարցազրոյցը ՀՅԴ Բիւրոյի
Ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանի Հետ**

Մահմանադրական փոփոխութիւններին կողմնակից ուժերից ՀՅԴ-ն, որը անցած 25 տարիներին խորհրդարանական համակարգի անցնելու հիմնական ջատագովներից մէկն էր, յառաջիկայ հանրաքուէում պատրաստուում է անհատական քարոզչութիւն իրականացնել՝ առանձին ՀՀԿ-ից եւ «այո»-ի դաշտի մնացած ուժերից: Դաշնակցականների պնդմամբ՝ իրենց «այո»-ն ուրիշ «այո» է, եւ իրենց հիմնաւորումներն էլ ունեն առաւել խորքային եւ գաղափարական բնոյթ: Դաշնակցութեան մօտեցումների շուրջ «Առաջին Լրատուական»-ը գրուցեց ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանի հետ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԻՄԱՍ».- Պարոն Մարգարեան, ինչո՞վ է Դաշնակցութեան «այո»-ն ուրիշ, ինչո՞ւ չէք ցանկանում միաւորուել «այո»-ի դաշտի միւս ուժերի հետ: Արդեօք մտավախութի՞ւն ունէք, որ ՀՀԿ-ի հետ ժողովրդի առջեւ հանդէս գալով՝ կարող էք որոշակիօրէն վարկաբեկուել, հեղինակագրկուել: Առանց այդ էլ դուք միանշանակ չէք ընկալում հանրութեան կողմից, քանի որ փաստօրէն սատարում էք Մերժ Մարգսեանի նախաձեռնութեանը՝ սահմանադրական փոփոխութիւններին:



ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ.- «Այո»-ն պէտք չէ անպայման տեսնել ի հակադրութիւն միացումի, մեր «այո»-ն տարբեր է, բայց մենք չենք ասում, որ հակադրում ենք կամ Հանրապետականը վատն է, չենք ուզում համագործակցել: Մեր շեշտադրումներն են տարբեր: Մենք 25 տարի ունեցել ենք խորհրդարանական համակարգի անցնելու մեր հիմնաւորումը: Մենք ունենք ներկայ իրավիճակի մեր ախտաճանաչումը: Այդ ախտաճանաչումից ելնելով է, որ կարծում ենք՝ սահմանադրական փոփոխութիւնները այս բացասական երեւոյթներին վերջ դնելու ելք են: Այստեղ է, որ տարբերութիւն կայ: Տարբերութիւնը մօտեցման եւ մեկնարկի մէջ է: Այսօրուայ իրականութիւնում մենք տարբեր ենք գնահատում, տարբեր շեշտադրումով ենք հիմնաւորում

Մահմանադրութեան փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը: Վարկաբեկիչ է թէ վարկաբեկիչ չէ, կարծեմ՝ ձեր անձնական տպաւորութիւնները պէտք չէ որ հանրութեան անունով յայտարարէք, որովհետեւ ժողովուրդը մի քիչ չարաշահուած է:

«Ա. Լ.».- Դուք այսօր ընդդիմութի՞ւն էք:

Հ. Մ.- Մենք այն ենք, ինչ որ կանք, Դաշնակցութիւն ենք: Դաշնակցութիւնը չի կարելի գրքային բացատրութիւնների մէջ տեղաւորել: Վերջապէս ո՞վ է ընդդիմութիւնը՝ նա, որ իշխանութեան մէջ չէ, մենք իշխանութեան մէջ չենք: Ո՞վ է ընդդիմութիւնը՝ ով ունի այլընտրանքային ծրագիր, մենք ունենք այլընտրանքային ծրագիր: Մենք ենք, որ էապէս տարբերում ենք մեր տնտեսական-ընկերային քաղաքականութեամբ, միւս բոլորը տնտեսական լիբերալ համակարգի կողմնակից են, միայն մենք ենք, որ սոցիալիստական տնտեսական քաղաքականութեան ենք հետեւում, ուրեմն իրական ընդդիմութիւնը միայն մենք ենք: Բայց մեր երկիրը եւ մեր ժողովրդի վիճակն այնպիսին է, որ մենք այդ ընդդիմութիւնը չենք կարող ձեռք վերածել, հայեցելով ու մերժելով, բացասական էներգիայով չէ, որ մարդ ընդդիմութիւն է դառնում: Ընդդիմութիւն են դառնում այլընտրանքային ծրագիր մէջտեղ բերելով եւ դրա համար պայքարելով: Իսկ երբ երկրի եւ ժողովրդի շահը պահանջում է, մենք պէտք է կարողանանք գիտակցել՝ իշխանութեան դէմ պայքարն ինչ է, իսկ երկրի եւ հայրենիքի շահի համար՝ համագործակցութիւնն ինչ է:

Այսինքն՝ այո, մենք համագործակցում ենք Ցեղասպանության, Ղարաբաղի հարցով, եթե չհամագործակցենք, մենք հայ կոչուելու իրաւունք չունենք: Քաղաքական հաշուարկումներից ելնելով՝ այս երկրին եւ այս ժողովրդին նոյնիսկ ակամայ չպետք է հարուածել, դրա համար մենք պետք է լինենք այն, ինչ ասում ենք, ոչ թէ ձեւի գոհ գնալով՝ ակամայ անենք այն բանը, որ կ'անի թշնամին:

«Ա. Լ.».- Այն ժամանակուանից ի վեր, երբ 2009թ. դուրս համախոհութենէն դուրս եկաք՝ հայ-թուրքական արձանագրութիւնների հարցում իշխանութիւնների հետ տարաձայնութիւնների պատճառով, խօսակցութիւններ են շրջանառուում, որ ՀՅԴ-ն կարող է նորից համախոհութիւն կազմել ՀՀԿ-ի հետ: Հիմա էլ սահմանադրական փոփոխութիւնների այս նախագծի հարցում փաստօրէն համակարծիք էք ՀՀԿի հետ, եւ կարծես ձեր սկզբունքային տարաձայնութիւնները վերացել են՝ նաեւ հայ-թուրքական արձանագրութիւնների հետ կապուած: Հնարաւո՞ր է, որ յառաջիկայում վերադառնաք կոալիցիա: Այդ մասին պարբերաբար մամուլում լուրեր են շրջանառուում, անգամ նշում է պաշտօններու քանակը, նաեւ ժամկէտը:

Հ. Մ.- Ես ձեզ վստահեցնում եմ, Դաշնակցութեան հետ ոչ ոք ոչ մի պորտֆելի մասին չի խօսել, եւ ոչ ոք Դաշնակցութիւնից դեռ ոչ մի համաձայնութիւն իշխանութիւնների հետ չունի, սա բացարձակ ճշմարտութիւն է: Սրանից դուրս ինչ որ կայ, սուտ է: Եւ այդ սուտը նոր չէ: Այդ սուտը ասել են այն օրուանից, երբ մենք կոալիցիայից դուրս ենք եկել:

«Ա. Լ.».- Այդ օրուանից երբեք չէ՞ք բանակցել իշխանութիւնների հետ կոալիցիա մտնելու համար:

Հ. Մ.- Ո՛չ: Երբեք չենք բանակցել կոալիցիա մտնելու շուրջ, բայց բանակցել ենք այսինչ քաղաքականութիւն փոփոխելու, այնինչ որոշման, մօտեցումի հարցերով, սահմանադրական փոփոխութիւնների շուրջ: Ինչպէ՞ս կարելի է Ազրպէյճանի, ռուսի, թուրքի հետ բանակցել, իսկ մենք իրար հետ չբանակցենք: Սա ի՞նչ մօտեցում է, որ նոյնիսկ բանակցութիւնը համարոււմ է թապու:

«Ա. Լ.».- Բազմիցս ասել էք, որ չունէք թապու՝ համախոհութիւն մտնելու, եթէ նպատակայարմար գտնէք: Հիմա կա՞յ նպատակայարմարութիւն՝ յունուարից յետոյ համախոհական կառավարութիւն մտնելու, թէ ոչ:

Հ. Մ.- Հէնց դա է հարցը: Մենք 25 տարի Հայաստանում ճիգ ենք թափում բացատրելու, որ մեր պետական համակարգը կարող է առողջանալ, բարեփոխուել, Հայաստանն իր զարգացման իմաստով նոր ուղի կարող է դուրս գալ, եթէ խորհրդարանական համակարգի անցնենք: Թե՛ ընդդիմութեանը, թե՛ իշխանութեանն ասել ենք, որ նախապայմանը 7 կէտն է: Մեզ համար նպատակը Հայաստանն է ու հայ ժողովուրդը: Եթէ Սահմանադրութիւնն ընդունուի, եւ իշխանութեան կողմից լինի առաջարկ, մենք կը գնանք մեր առաջարկութիւնների փաթեթով, եթէ կ'ընդունուի, մենք այն կուսակցութիւնը չենք, որ պատասխանատուութիւնից փախչենք: Մենք ինչ որ ասել ենք, հետեւողականօրէն տէր ենք կանգնել մեր ասածին, հետեւողական ենք եղել մեր քաղաքական դիրքորոշման մէջ: Այս ամբողջ ասեկօսէն, բամբասանքը, սուտը, որ լցրել են մամուլը՝ ամէն առիթով ասելով, որ տակից ուրիշ խաղ կայ, տակից ուրիշ հաշիւ կայ, լաւ, բա 2009-ից 6 տարի անցել է, այդ ստից չէ՞ք ձանձրացել: Ամէն ինչ չափ ունի, չէ՞:

«Ա. Լ.».- Բայց միգուցէ դա նաեւ Դաշնակցութեան վարքագծից է գալիս, որովհետեւ դուք մշտապէս «կողմ ըլլալով» դէմ էք, «դէմ ըլլալով՝ կողմ»:

Հ. Մ.- Մենք ինչ որ ասել ենք, դրան հաւատարիմ ենք եղել: Մենք ասել ենք անհատի չենք վիրաւորելու, մենք ասել ենք թշնամութիւն չունենք ոչ ոքի հետ ներազգային կեանքի մէջ, մենք պատրաստ ենք համագործակցել, երբ ազգի շահի հարց գոյութիւն ունի: Եթէ մեզ չեն հասկացել, դա ուրիշ հարց է:

«Ա. Լ.».- ՀՅԴ-ի 7 կէտանոց փլաթֆորմը (քաղաքական ծրագիրը-Խմբ.) դեռ 2012թ. յայտնի խորհրդակցութիւններու շրջանակներում դրուեց շրջանառութեան մէջ: Դուք նշել էիք, որ եթէ քաղաքական ուժերից որեւէ մէկը, այդ թւում՝ նաեւ ՀՀԿ-ն, ընդունի ձեր առաջարկած 7 կէտերը, դուք պատրաստ էք համագործակցելու: Վերջերս էլ նշեցիք, որ սահմանադրական փոփոխութիւնների ընդունմամբ ձեր փլաթֆորմի երեք կէտերը իրականացոււմ են: Որոնք են այդ կէտերը:

Հ. Մ.- 1.- Խորհրդարանական համակարգ, 2.- 100 տոկոսով համամասնական ընտրակարգ եւ 3-րդ կէտը® այս պահին չեն մտաբերում:

«Ա. Լ.»- Դուք նշել էիք, որ եթէ չի ընդունուում ամբողջ փաթեթը, ապա համագործակցութեան մասին խօսք լինել չի կարող: Յոյս կամ հեռանկար ունէ՞ք, որ առաջիկայում նաեւ միւս 4 կէտերը կ'ընդունուեն:

Հ. Մ.- Յոյս՝ չկայ: Մենք ինչ որ մինչեւ այսօր ասել ենք, եղել է, յուսով եմ՝ դրանք էլ կը լինեն:

«Ա. Լ.»- Այսինքն՝ եթէ 6 կէտն ընդունուի, բայց մէկը չընդունուի, չէ՞ք համագործակցելու:

Հ. Մ.- Մէկ անգամ էլ են այդ հարցը տուել, ասել եմ՝ ոչ:

«Ա. Լ.»- Կարծում էք իշխանութիւնը կը գնա՞յ գործառնութեան եւ քաղաքականութեան տարանջատմանը, ինչը ձեր փլաթֆորմի կարեւոր կէտերից է: Դա իրողակա՞ն էք համարում գործող իշխանութիւնների պարագայում:

Հ. Մ.- Իրողական է, եթէ իրողական չլինէր, մենք չէինք գրի:

«Ա. Լ.»- Սերժ Սարգսեանը կը գնա՞յ դրան:

Հ. Մ.- Եթէ այս իշխանութիւնը ուզում է յարատեւի, դիմանայ, գոյատեւի, զարգանայ, պէտք է ընդունի, չընդունի՝ նշանակում է չի ուզում:

«Ա. Լ.»- Եթէ նոր սահմանադրութիւնն ընդունուի, բայց ձեր 7 կէտերը չընդունուեն, այդ դէպքում համախոհութիւն մտնելու մասին խօսք չի՞ լինի:

Հ. Մ.- Շատ-շատ պատճառներով մենք կարող ենք համախոհութիւն չմտնել, համախոհութիւն մտնելը մեզ համար նպատակ չէ, մենք 7 տարի է կռաւիցիա չենք եւ չենք մեռել: Յանկացած բանակցութիւն առաջարկութիւնների մէկ ամբողջականութիւն է, որովհետեւ եթէ երկու ուժեր իրար հետ պէտք է համագործակցեն, երկուսն էլ ինչ որ բան պէտք է զիջեն, որ կարողանան համագործակցել:

«Ա. Լ.»- Բայց դուք ասում էք, որ ձեր 7 կէտերից ոչ մէկը չէք զիջելու:

Հ. Մ.- Էնքան զիջելու բան կայ, որ կարող է շատ աւելի ցաւալի լինել, որ չպէտք է զիջել եւ այդ 7 կէտերի մէջ չէ:

«Ա. Լ.»- Բա՞նքի Յովհաննիսեանը ձեր 7 կէտերն էլ ընդունեց, բայց դուք չպաշտպանեցիք նրա թեկնածութիւնը նախորդ նախագահական ընտրութիւններում: Ինչո՞ւ:

Հ. Մ.- Մէկ ամիս յետոյ ծրագիր հրապարակեց, եւ այդ 7 կէտից մի նշոյլ անգամ չկար դրա մէջ:

«Ա. Լ.»- Բայց դուք մինչ այդ մէկ ամիսն էլ չայտարարեցիք, որ պաշտպանում էք նրան:

Հ. Մ.- Մենք Բա՞նքի Յովհաննիսեանի հետ սերտ համագործակցութեան ժամանակաշրջան ենք ունեցել, բայց ինքը մեզ էլ յուսախաբ արեց, իր կուսակցութեան անդամներին էլ:

«Ա. Լ.»- Անդրադառնանք Բա՞նքի Յովհաննիսեանի մասնակցութեամբ «Նոր Հայաստան» հանրային ձեռնարկի, «ոչ»-ի դաշտի գործունէութեանը, ինչպէ՞ս էք գնահատում հակառակ ճամբարում տեղի ունեցող գործընթացները, որ չեն կարողանում միասնական օրակարգով հակադրել իշխանութիւններին:

Հ. Մ.- Ես չեմ ուզում ուրիշների մասին դատողութիւններ անել, դա լաւ բան չէ: Ես բնական եմ համարում ամէն ինչ, բայց նաեւ գիտեմ՝ ծայրայեղականութիւնը միշտ երկար չի մնում: Երբ որ ծայրայեղութեան են գնում, դժուար է լինում թէ՛ միանալը, թէ՛ համագործակցելը, թէ՛ գոյատեւելը:

«Ա. Լ.»- *Դէ Դաշնակցութիւնն, ի հարկէ, ունեցել է ծայրայեղականութեան այդ փորձը:*

Հ. Մ.- Մենք եղել ենք վճռական, բայց ոչ թէ ծայրայեղ:

«Ա. Լ.»- *Այսինքն՝ դուք հիմա դէ՞մ էք ընդդիմութեան պահանջներին՝ իշխանանափոխութիւն իրականացնելուն, արտահերթ խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններ անցկացնելուն. դուք՝ որպէս ընդդիմադիր ուժի ղեկավար, դէ՞մ էք:*

Հ. Մ.- Այո՛:

«Ա. Լ.»- *Ինչո՞ւ էք դէմ:*

Հ. Մ.- Որովհետեւ ես չեմ կարծում, որ այսօր ցնցումային բանը մեր երկրին պէտք է: Մենք մէկուկէս տարի ունենք մինչեւ ընտրութիւնները: Աշխատենք բոլորս, ճիգ թափենք, որ ընտրութիւններին յաջողենք: Պարտադրենք իշխանութեանը արդար ընտրութիւններ անցկացնելու: Պէտք է իշխանութիւնը պարտադրուած լինի արդար ընտրութիւններ անցկացնելու:

«Ա. Լ.»- *Բայց Սահմանադրութեան փոփոխութեամբ, ըստ ընդդիմութեան, իշխանափոխութեան հնարաւորութիւնը վերանում է:*

Հ. Մ.- Ո՛չ, սխալ կարծիքի եմ: Իրենք իրենց շահի գիտակցութիւնը չունեն: Ես մէկ անգամ բացատրել եմ, որ այս Սահմանադրութիւնը յաջորդ ընտրութեան ամենանպաստաւոր հնարաւորութիւնն է տալիս:

«Ա. Լ.»- *Եթէ առաջիկայ հանրաքուէն տապալուի, այսինքն՝ փոփոխութիւնները չանցնեն, ո՞ր դաշտում ենք տեսնելու Դաշնակցութեանը:*

Հ. Մ.- Այն դաշտում, որ կանք. դրական ուժ ենք լինելու՝ ընդդիմութեան դաշտում կամ իշխանութեան դաշտում: Հիմա մենք ընդդիմութեան դաշտում ենք, ընդդիմութեան դաշտում ենք լինելու:

«Ա. Լ.»- *Դուք տեւական ժամանակ Ռոբերտ Քոչարեանի քաղաքական յենարանն էիք: Ինչպէս գիտէք, 2-րդ նախագահը դէմ է հանդէս եկել սահմանադրական փոփոխութիւններին՝ նշելով, որ դա մեծագոյն սխալը կը լինի Հայաստանի համար: Ինչպէ՞ս էք վերաբերում նման գնահատականին եւ արդեօք կարո՞ղ ենք ասել, որ այսուհետ ձեր ճանապարհները անվերադարձ բաժանուում են:*

Հ. Մ.- Մենք քաղաքական յենարան չենք եղել, մենք համագործակցել ենք Ռ. Քոչարեանի հետ, եւ չէի ուզենայ հրապարակաւ նրա դէմ խօսել: Ռոբերտ Քոչարեանի հանդէպ մեծ յարգանք ունեմ, բայց իմ սկզբունքների հանդէպ ասելի մեծ յարգանք ունեմ: Ռոբերտ Քոչարեանը սխալուում է եւ ինքն իրեն հակասում է:

«Ա. Լ.»- *Յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններում, ի՞նչ էք կարծում, որքա՞ն ձայն կ'ունենաք:*

Հ. Մ.- Կեանքում շատ բաներով եմ զբաղուել՝ բացի Նոսթրատամուսի զբաղմունքից. կանխատեսումներ անել երկու տարի յետոյի մասին, կարծում եմ, սխալ է:

WWW.AZTARAR.COM



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՈՎԱՆԱԴՐՈՐՈՒԹԵԱՄԲ՝
Գերպ.Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպույեանի

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝
ՔՈՒԷՅԹԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՍԵՒՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

(Ուոուրթո Ուիլսոնի իրաւարար վճիռի 95-ամեակը)

ՕՐՈՒԱՆ ԲԱՆԱԽՕՍ՝

ԲԺՂ. Մանուկ Մանուկեան

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 4 Նոյեմբեր 2015-ին,
երեկոյեան ժամը 9:00-ին, Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ մէջ,

Քուէյթ:

Բոլորդ սիրով հրաւիրուած էք:

ՔՈՒԷՅԹԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

**Հայ Ղատի Խորհրդածողովն Ու
Տարեկան Ձեռնարկը
Ի Մի Բերաւ 2000 Հոգի**

Նախորդ շաբաթավերջին մտաւորապէս 2000 հայորդիներ իրնեց մասնակցութիւնը բերին Արեւմտեան Ամերիկայի Հայ դատի յանձնախումբին կազմակերպած Հայ դատի խորհրդածողովին եւ տարեկան ձեռնարկին, որոնք տեղի ունեցան «Մենչըրի փլազա» պանդոկին մէջ:

Ուրբաթ երեկոյեան սկսած Հայ դատի երկօրեայ խորհրդածողովը առիթ հանդիսացաւ օրէնքի մասնագէտներու, մտաւորականներու, արուեստագէտներու, քաղաքական անձնաւորութիւններու եւ գործիչներու, ինչպէս նաեւ վերլուծաբաններու՝ քննարկելու Հայ դատի տարբեր երեսները եւ ապագայ նախաձեռնութիւնները:

Կիրակի օր նոյն պանդոկի գլխաւոր սրահին մէջ կայացաւ Հայ դատի տարեկան ձեռնարկը, որուն մասնակցեցաւ 1500 հոգի: Արեւմտեան Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի տարեկան գործունէութեան ներկայացման կողքին, ձեռնարկին ընթացքին մեծարուեցան Ուոլթըր Քարապեան («Ժառանգութեան» մրցանակ), Ճեֆրի Ռապըրթսըն եւ Ամալ Քլունի («Արդարութեան ջատագով» մրցանակ), Էրիք Պօղոսեան («Արուեստներու» մրցանակ) եւ Արեւմտեան Ամերիկայի Հայ երիտասարդաց դաշնակցութիւնը («Վահան Քարտաշեան» մրցանակ):

**Սրբոց Թարգմանչաց Տօնի Առթիւ
Ս. Եւ Անմահ Պատարագ**



Նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Բարգէն արք. Չարեանի, 10 Հոկտեմբերին Ս. Ամենափրկչեան վանքի Ս. Յովսէփ Արեւմաթացի եկեղեցոյ մէջ մատուցուեցաւ Ս. պատարագ:

Եկեղեցական արարողութեան աւարտին «Խաչատուր վրդ. Կեսարացի»-ի անուան թանգարանի մուտքին գտնուող Մեսրոպ Մաշտոցի եւ Խաչատուր վրդ. Կեսարացիի կիսանդրիներուն

մօտ գործադրուեցաւ աշակերտական գեղարուեստական յայտագիր: Սպահանի հայոց թեմի Կրթական խորհուրդի գրասենեակի պատասխանատու Մատլէն Ղարիպեան շնորհաւորեց մշակոյթի եւ ուսուցչական տօները, ապա հերթաբար ելոյթ ունեցան հայոց ազգային դպրոցներու աշակերտութիւնը, որոնք ներկայացուցին արտասանութիւններ եւ երգեր:

Ապա յուշանուէրներով պարգեւատրուեցան դպրոցներուն եւ Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարաններու ամենէն ընթերցասէր աշակերտ-անդամները:

Աւարտին սրբազան հայրը իր պատգամին մէջ անդրադարձաւ Թարգմանչաց տօնին՝ զայն համարելով ազգային-եկեղեցական, լեզուի, մշակոյթի եւ հոգեւոր վերածնունդի տօն: Ան շեշտեց, որ Մեսրոպ Մաշտոց սովորական մարդ մը չէր: Ան իր ազգի գոյատեւման ու ինքնութեան պահպանման մասին մտածելով ստեղծեց հայերէն տառերը: Սրբազանը նաեւ, յորդորեց աշակերտները անադարտ պահելու եւ լաւ սորվելու հայ լեզուն ու մշակոյթը՝ կոչ ուղղելով, որ հպարտ զգան հայ ըլլալուն եւ Մեսրոպ Մաշտոցի ժառանգորդները կոչուելուն համար:

Աւարտին ծաղիկներ զետեղուեցաւ Ս. Ամենափրկչեան վանքի բակին մէջ ամփոփուած «Քանանեան» դպրոցի հիմնադիր Վառվառէ Քանանեանի շիրմին առջեւ:

Հայաստանի Պետական Սենեկային Երգչախումբին Ելոյթը

11 Հոկտեմբերին Թեսալոնկէի Քալամարիա շրջանին մէջ Թագաւորին հին ամարանոցի պալատին մէջ (Քիվերնիու) տեղի ունեցաւ Հայաստանի Պետական սենեկային երգչախումբին ելոյթը:



Յայտագիրի ընթացքին ներկայացուեցան հայկական եւ այլ ազգերու երգեր:

Համերգի աւարտին Լիոնատիս Բաբատոբուլուսի կողմէ տեղի ունեցաւ պարգևատրում երգչախումբի ղեկավարին՝ ի նշան համագործակցութեան Բարեգործական եղբայրութեան այր մարդոց միութեան հետ, որ յանձն առած էր երեկոյթին կազմակերպումը:

12 Հոկտեմբերին Օրեօքաստրոյի մէջ տեղի ունեցաւ երգչախումբին երկրորդ ելոյթը: Կրկին ներկայացուեցան հայ եւ այլ ազգերու երգեր, ինչպէս նաեւ յունարէն երգ մը:

Յեղասպանութեան Զոհերու Յիշատակին Նուիրուած Երեկոյ

12 Հոկտեմբերին, Փարիզի «Ֆոլի Պերժեր» սրահին մէջ, Շարլ Ազնաւուրի հովանաւորութեամբ, տեղի ունեցաւ յատուկ համերգ մը՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան եւ Ռոջակիզումի զոհերու յիշատակին: Ձեռնարկը կը կրէր «Դո՛ւն իմ եղբայր» խորագիրը:



Ելոյթ ունեցան կարգ մը անձնաւորութիւններ, նաեւ պաստառի վրայ ցուցադրուեցաւ Շարլ Ազնաւուրի ուղերձը:

Յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերին յայտնի յօրինող, դաշնակահար Միշէլ Լըկրանը իր որդւոյն՝ Պենժամինի հետ, դաշնակահար, երգիչ Փիլպեր Մոնթանի, երգիչ Էնրիքօ Մասիաս, երաժիշտ Անտրէ Մանուկեան, տուտուկահար Լեւոն Մինասեան եւ ուրիշներ:

WWW.AZTAGDAILY.COM

ՊԱՐՏԻԶԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԻԶԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԻԶԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ՆԱԽԸՆԹՐԻՔ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՏԻԿԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ

ՏԵՂԻ Կ՝ՈՒՆԵՆԱՑ ՀԻՆԳՇԱԲԹԻ, 5 ՆՈՑԵՄԲԵՐ 2015-ԻՆ

ԿԷՍՕՐԷ ԵՏՔ ԺԱՄԸ 4-ԷՆ ՄԿՍԵԱԼ

« ՀԱՏԻՔԱԹ ԱՆՆԱՖՈՒՐԱՅԻ » (حديقة النافورة) ՄԷՋ:



ՀԱՄԵՂ ՃԱՇԵՐ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ ԽԱՂԵՐ

Տոմսերը ապահովելու համար, դիմել հետևեալ տիկիյններուն:-

- ❖ Պիաթրիս Մելիքսէթեան 9978 6703
- ❖ Ժազլին Խտրլարեան 9950 8762
- ❖ Սիլվա Քեմանճեան 9757 3025

ՊԱՐՏԻԶԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԻԶԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ԱՅԼԱԶԱՆ

Համեմներ, Որոնք Կը Զօրացնեն Դիմադրականության Համակարգը

«Հելթի լայֆ թրիքս»-ը կը ներկայացնէ համեմներ, որոնք կ'օգնեն դիմադրականության համակարգի զօրացման:

Կոճապղպեղ

Ուտելիքներուն իրայատուկ համ տալէ բացի, կոճապղպեղը կը նպաստէ մաքստղութեան, կը թեթեւցնէ սրտխառնուքը եւ կ'օգնէ ձմեռնային հիւանդութիւններու արագ բուժման:



Քրքում կամ սաֆրան

Ոսկեղեղին գոյն ունեցող այս փոշին շատ կ'օգտագործուի հնդկական խոհանոցին մէջ եւ ունի հակաբորբոքային յատկութիւն:

Կասիա

Նոյնպէս մարմնին դիմադրականութիւնը զօրացնող համեմ է կասիան: Անիկա հինէն ի վեր կ'օգտագործուի որպէս դեղ եւ համեմունք: Զայն օգտագործել խմորեղէններու, խմիչքներու եւ կերակուրներու մէջ:

Աստղածէւ անիսոն

Գեղեցիկ տեսքով այս համեմը նաեւ հաճելի բոյր եւ առողջարար յատկութիւն ունի: Զայն օգտագործել թէյին, պտուղի աղցաններու եւ եղինձի մէջ:



Սամիթի սերմեր

Երկաթով, մակնեգիտով, կիրով եւ հանքայիններով հարուստ սամիթի սերմերը նաեւ հարուստ են հակաօքսիտաններով, որոնք հակաբորբոքային յատկութիւն ունին:

WWW.ARMENIANPRELACYKW.ORG